ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 768-Ա/2 **18.06.2020թ.**

2020 ԹՎԱԿԱՆԻ (ԵՐԿՐՈՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ)՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «2020 թվականի՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման (երկրորդ քննաշրջան) աշխատակարգը»՝ համաձայն N 1 հավելվածի:

2) «Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկության ձևով քննությունների կազմակերպման (2020 թվականի երկրորդ քննաշրջան) ժամանակացույցը» և «Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկության ձևով քննությունների կազմակերպման (2020 թվականի երկրորդ քննաշրջան) ժամանակացույցը»՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Քննություններն անցկացնել 2020 թվականի հունիսի 19-ից հուլիսի 25-ը ներառյալ:

3. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության հանրակրթության վարչության պետին:

Նախարար **Ա. Հարությունյան**

X

Հավելված N1

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020թ. մայիսի 18-ի N 768-Ա/2 հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

2020 ԹՎԱԿԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

(*ԵՐԿՐՈՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆ*)

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2020 թվականի երկրորդ քննաշրջանի ընթացքում <<Հայոց լեզու և հայ գրականություն>>, <<Համաշխարհային պատմություն», <<Մաթեմատիկա>>, <<Հայաստանի աշխարհագրություն>>, <<Աշխարհագրություն>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Բնագիտություն>> (<<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Աշխարհագրություն>> առարկաներ՝ սովորողի ընտրությամբ), <<Ռուսաց լեզու>> առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

2. Քննական թեստերը կազմում է Գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

1) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» և <<Ռուս գրականություն>>(ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար), <<Օտար լեզու>> (<<Անգլերեն>>, <<Ֆրանսերեն>>, <<Գերմաներեն>>, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), <<Հայոց պատմություն>>, <<Գրականություն>> առարկաների քննությունները հանձնում են բանավոր: <<Ֆիզկուլտուրա>> առարկայի քննության անցկացման եղանակը նորմատիվների հանձնումն է: Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

2) Արտակարգ դրության ընթացքում բանավոր քննությունները կազմակերպվում են քննական կենտրոնում՝ ՏՀՏ կիրառմամբ:

3. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2020 թվականի երկրորդ քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» և Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), <<Ռուսաց լեզու>>, <<Հայոց պատմություն>>, <<Մաթեմատիկա>>, <<Հայոց լեզու և հայ գրականություն>> առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

4. Քննական թեստերը կազմում է ԳԹԿ-ն՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

1) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» և <<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաներիքննություններըհանձնումեն բանավոր: <<Ֆիզկուլտուրա>> առարկայի ստուգարքն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

5. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են համաձայն հավելված 2-ի: Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը, բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

6. Արտակարգ դրության ընթացքում դրսեկը ՏՀՏ կիրառմամբ քննությունը հանձնում է քննասենյակում՝ տեսակապի միջոցով: Բանավոր պատասխանը տեսագրվում է:

7. Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են Դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

8. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկանները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի: Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

9. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն աղյուսակ 1-ի:

10. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

11. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:

Աղյուսակ N 1

8-9 միավոր – 4	16-17 միավոր–8
10-11 միավոր– 5	18-19 միավոր-9
12-13 միավոր– 6	20 միավոր-10
14-15 միավոր – 7	

Հավելված N2
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020թ. մայիսի 18-ի N 768-Ա/2 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
(2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆ)

N	**Առարկա**	**քննության անցկացման եղանակը**	**քննությունների անցկացման օրերը**
1	Ֆիզկուլտուրա	ստուգարք (նորմատիվների հանձնում)	07.07.2020թ.
2	Ֆիզիկա	գրավոր	08.07.2020թ.
3	Համաշխարհային պատմություն	գրավոր	09.07.2020թ.
4	Հայաստանի աշխարհագրություն	գրավոր	10.07.2020թ.
5	Հայոց լեզու և հայ գրականություն	գրավոր	11.07.2020թ.
6	Մաթեմատիկա	գրավոր	12.07.2020թ.
7	Հասարակագիտություն	բանավոր	13.07.2020թ.
8	Բնագիտություն	գրավոր	14.07.2020թ.
9	Ինֆորմատիկա	բանավոր	15.07.2020թ.
10	Հայոց պատմություն	բանավոր	16.07.2020թ.
11	Գրականություն	բանավոր	17.07.2020թ.
12	Աշխարհագրություն	գրավոր	18.07.2020թ.
13	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	19.07.2020թ.
14	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն)	բանավոր	20.07.2020թ.
15	Քիմիա	գրավոր	21.07.2020թ.
16	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	22.07.2020թ.
17	<<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	23.07.2020թ.
18	Կենսաբանություն	գրավոր	24.07.2020թ.
19	Ռուսաց լեզու	գրավոր	25.07.2020թ.

*Քննությունների սկիզբը՝ ժամը 10:00-ին:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ *ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ*
(2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆ)

	Առարկա	**քննության անցկացման եղանակը**	**քննությունների անցկացման օրերը**
1	Ֆիզկուլտուրա	ստուգարք (նորմատիվների հանձնում)	19.06.2020թ.
2	Հայոց լեզու և հայ գրականություն	գրավոր	20.06.2020թ.
3	Մաթեմատիկա	գրավոր	21.06.2020թ.
4	Հայոց պատմություն	գրավոր	22.06.2020թ.
5	Համաշխարհային պատմություն	գրավոր	23.06.2020թ.
6	Ֆիզիկա	գրավոր	24.06.2020թ.
7	Հասարակագիտություն	բանավոր	25.06.2020թ.
8	Քիմիա	գրավոր	26.06.2020թ.
9	Ինֆորմատիկա	բանավոր	27.06.2020թ.
10	Կենսաբանություն	գրավոր	28.06.2020թ.
11	Աշխարհագրություն	գրավոր	29.06.2020թ.
12	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	30.06.2020թ.
13	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն)	գրավոր	01.07.2020թ.
14	Ռուսաց լեզու	գրավոր	02.07.2020թ.
15	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	03.07.2020թ.
16	<<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	04.07.2020թ.

*Քննությունների սկիզբը՝ ժամը 10:00-ին, բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի քննության, որի սկիզբը՝ ժամը 16:00-ին: